ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

«Պտղաբուծության շուկայի զարգացում Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերում» ծրագիրը մեկնարկել է 2018 թ.-ին և ֆինանսավորվում է Շվեյցարական Միջեկեղեցական Օգնության Կազմակերպության (HEKS/EPER) կողմից: Այն համատեղ իրականացնում են «Շեն» և «Սյունիք-Զարգացում» հասարակական կազմակերպությունները:

Ծրագրի նպատակն է նշված մարզերի առավել թվով ֆերմերների հնարավորություն ընձեռել ստանալու հավելյալ եկամուտ մրգի վաճառքից: Այն իրականացվում է երկու գլխավոր գործոնների կիրարկմամբ՝ որակյալ մրգի արտադրության խթանման և արտադրված մրգի վրա հավելյալ արժեք ստեղծելու միջոցներով: Հատուկ շեշտը դրվել է հետբերքահավաքային տեխնոլոգիաների կատարելագործման, միրգ արտադրողների խմբերի կարողությունների զարգացման և արժեշղթայում հավելյալ արժեքի ստեղծման վրա: Ծրագիրը ֆերմերներին օժանդակում է հմտություններ ձեռք բերել մարքեթինգի, առևտրային կապերի ստեղծման, բնական աղետների ռիսկի նվազեցման համակարգերի ներդրման, ինչպես նաև լավագույն գյուղատնտեսական փորձի վերաբերյալ:

Ծրագիրն իրականցվում է Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերի 39 համայնքներում.

Վայոց ձորի մարզի՝ Աղավնաձոր, Ագարակաձոր, Աղնջաձոր, Արենի, Արփի, Արտաբույք, Չիվա, Գետափ, Գլաձոր, Գնիշիկ, Վերնաշեն, Մալիշկա, Հերմոն, Խաչիկ, Խնձորուտ, Նոր Ազնաբերդ, Քարագլուխ, Ռինդ, Սալլի, Ծատին, Թառաթումբ, Եղեգիս, Եղեգնաձոր համայքներում

Գեղարքունիքի մարզի՝ Վարդենիս, Մարտունի, Կարճաղբյուր, Խաչաղբյուր, Ծովակ, Տորֆավան, Վանեվան, Լուսակունք, Ակունք, Լճավան, Ծատջրեք, Մեծ Մասրիկ, Ավազան, Լճաշեն, Գեղամասար, Ծովինար համայնքներում

«Մարքեթինգային խումբ» նորարական մոդելը, որպես ծրագրի առանցքային գործիք առաջարկվել է Շեն և Սյունիք - Զարգացում կազմակերպությունների կողմից:

Մարքետինգային խումբը (ՄԽ)՝ միևնույն հետաքրքրություն ունեցող (պտղաբուծությամբ կամ մրգի վաճառքով զբաղվող) անձանց միավորում է, որի անդամները միասին հավաքում, գնում, պահպանում կամ վերամշակում և վաճառում են պտուղը:

Այնպիսի լուրջ մարտահրավերներ, ինչպիսիք են կաթի գների իջեցումը, կարտոֆիլի վաճառքի հետ կապված խնդիրները, ինչպես նաև, պտղի աճող պահանջարկը մեր կազմակերպություններին մղեցին նոր մոտեցումների նեմուծմանը: Իրականացված բազմակողմանի հետազոտությունները ցույց տվեցին ՄԽ-երի խթանման անհրաժեշտությունը: Պտղաբուծությունը համարելով հեռանկարային ուղղություն՝ ֆերմերները միավորվում են իրենց արտադրած միրգն ավելի բարձր գնով վաճառելու ընդհանուր նպատակի շուրջ: Դա հատկապես կարևոր է լեռնային և Երևանից հեռու գտնվող մարզերի համար, որտեղ ռեսուրսները չմիավորելու դեպքում պտղաբուծությունը հայտնվում է լուրջ մարտահրավերների առջև: Ակնհայտ է, որ պտղի երկարատև պահպանությունն առաջնահերթություն է ֆերմերի համար: Մյուս կողմից անհատ ֆերմերների արտադրած պտղի փոքր քանակները և սահմանափակ ֆինանսական միջոցները հնարավորություն չեն ընձեռում կառուցելու սառնարանային պահեստներ: Մեր ծրագրի շրջանակներում, սառնարանների կառուցումը Գեղարքունիքի մարզում նպաստեց ֆերմերների համագործակցությանը, համատեղ գումար ներդնելուն և միասին վաճառելուն: ՄԽ-երը փոքր, միաժամանակ ճկուն և վստահելի գործընկերներ են այլ ֆերմերների համար, ովքեր կարող են վաճառել իրենց արտադրած տանձը, բալը և այլ մրգեր անգամ փոքր քանակներով:

Ինչպես ցույց են տալիս մեր հարցումները, ՄԽ-երը փոքր ֆերմերային տնտեսությունների համար արագորեն վերածվում են տնտեսական զարգացման նոր գործիքի: Մեր ծրագրերում ՄԽ-երի էական ֆինանսական մասնակցությունը, ինչպես բերված է ստորև, նրանց տնտեսական կայունության ցուցանիշ է:

ՄԽ-երը նաև հետաքրքրական են գնորդների ու վերամշակողների համար, քանի որ նրանք կարողանում են որակյալ և մեծաքանակ պտուղ մատակարարել: Վերջինիս շնորհիվ գնորդը գործ չի ունենում բազմաթիվ ֆերմերների հետ և կարողանում է խնայել ժամանակ ու ռեսուրսներ:

Ծրագիրը տարբեր ուղղություններով մեծ օժանդակություն է ցուցաբերում ՄԽ-երին՝

> Ծրագրի կողմից տրամադրված փոքր դրամաշնորհների միջոցով խմբերը ձեռք են բերում սարքավորումներ՝ սառնարանային պահպանության, չորացված մթերքի արտադրության և վերամշական համար

> Ստանում են գիտելիքներ մարքեթինգի, հետբերքահավաքային պահպանության, արդյունավետ վաճառքի, բիզնես պլանավորման, բիզնեսի կազմակերպման և նոր շուկաների հայթայթման վերաբերյալ

> Ծանոթանում են նոր տեխնոլոգիաներին, փորձին, նորարարություններին, կապեր են ստեղծում գնորդների և մատակարարների հետ

> Համագործակցում են միմյանց հետ և համատեղ վաճառում՝ դառնալով ավելի հետաքրքրական խոշոր գնորդների, սուպերմարկետների, անգամ արտահանողների համար

Այսօր կարող ենք արձանագրել, որ ՄԽ-երը, որպես Շեն և Սյունիք - Զարգացում կազմակերպությունների նախաձեռնություն, դառնում են մեր շահառուների խմբային համատեղ համագործակցության կայացած հարթակ:

2018-2021 թթ. ընթացքում ծրագրի շրջանակում հիմնադրվել են 24 մարքեթինգային խմբեր, որոնցից 16-ը՝ Գեղարքունիքում և 8-ը՝ Վայոց ձորի մարզում:

ՄԽ-երը Գեղարքունիքում հասցրել են ձևավորել փոքր բիզնես միավորներ, ինչպիսիք են՝ մրգի հավաքման կետերը, սառնարանային պահպանություն առաջարկողները, չորացված միրգ արտադրողները, վերամշակողների համար մրգի/հումքի մատակարարները, վերավաճառողները: Կարևորն այն է, որ փոքր ֆերմերային տնտեսությունների համար ՄԽ-երը հանդիսանում են մարզային տեղական շուկայի առաջին օղակի մթերողներ: Ֆերմերները կարողանում են իրենց ունեցած մրգի ամբողջական խմբաքանակն առանց խոչընդոտների տեղում վաճառել ՄԽ-ին: Հետագա տեսակավորումը և պահպանությունը իրականացնում են ՄԽ-երը: Փոքր արտադրողների համար ձևավորվում է մթերման շուկա, ինչը հասանելի չէր նախկինում: Տնամերձի միրգն ապրանքափոխանակության մակարդակից վերափոխվում է կանխիկ վաճառվող և հավելյալ շահույթ ապահովող արտադրանքի: Փոքր, միջին և բոլոր գյուղաբնակ ֆերմերները ձգտում են բարելավել իրենց արտադրանքի որակը և շատացնել քանակը: Այսպիսի համագործակցության արդյունքում հավելյալ եկամուտ են ստանում և՛ ֆերմերները, և՛ ՄԽ-երը:

Պտղաբուծության ոլորտի զարգացումը հեռավոր, բարձր լեռնային մարզերում խիստ կապված է վաճառքի հասանելիության հետ, իսկ ծրագրի օժանդակությամբ այս արժեշղթայում նոր դերակատարներ են հայտնվել հանձինս ՄԽ-երի, որոնք հնարավոր են դարձրել փոքր և միջին քանակի բերքի իրացումը: Այսպես, Գեղարքունիքում փոքր ֆերմերները մոտ 0.1 հա տնամերձ այգում աճեցված մրգից ստանում են այնքան եկամուտ, որքան 0.5-1 հա կարտոֆիլից:

2018-2021 թթ. հիմնադրված ՄԽ-երն իրենց արտադրական ծավալներով հասել են նկատելի լավ արդյունքների, ընդ որում այդ ցուցանիշը տարեցտարի բարելավվում է: Այսօր Գեղարքունիքի մարզում Ծեն կազմակերպության աջակցությամբ գործող 16 ՄԽ-երը գրանցել են հետևյալ արդյունքները.

> Մթերվել, սառնարաններում պահպանվել և թարմ սպառման համար վաճառվել է ավելի քան 1,600 տ միրգ

> ՄԽ-երի կողմից վերամշակողներին (հյութի և պահածոների համար) մատակարարվել է ավելի քան 170 տ միրգ

> Չորացված միրգ արտադրող ՄԽ-երի կողմից վերամշակվել է մոտ 600 տ միրգ և արտադրվել 120 տ չիր

> Մրգային օղիներ արտադրող ՄԽ-ի կողմից մթերվել է 100 տ միրգ և արդեն իսկ արտադրվել է 1900 շիշ մրգային օղի

Ստորև ներկայացնում ենք տեղեկատվություն 2018-2021 թվականներին հիմնադրված ՄԽ-երի մասին, ինչպես նաև կոնտակտային տվյալներ՝ հնարավոր համագործակցության համար:

ԼՃԱՇԵՆԻ ՋՐԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԽՈՒՄԲ



Գեղարքունիքի մարզ, գյուղ Լճաշեն

1 | Գառնիկ Ղազարյան (խմբի ղեկավար)
2 | Սուրեն Առաքելյան
3 | Ավետիք Սահակյան

Խումբը հիմնվել է 2018 թվականին, ֆերմերները միասին մթերում էին միրգ՝ հիմնականում ծիրան, սև սալոր և ավանդական եղանակներով ստանում էին չորացված մթերք:

Ծրագրի օժանդակությամբ ձեռք է բերվել արհեստական չորանոց, որն աշխատում է ինչպես բնական գազով, այնպես էլ էլեկտրականության միջոցով (350 կգ տարողությամբ): Նոր արհեստական չորանոցը խմբին հնարավորություն է տալիս պատրաստել բարձրարժեք չիր:

Ծրագրի օժանդակությամբ խումբը գրանցել է հետևյալ արդյունքները՝

- Մթերել է 55.64 տ միրգ, 37 ֆերմերներից
- Արտադրել է 8520 կգ չիր (ծիրանի, սև սալորի, կեռասի, տանձի)
- Ծիրանի և սալորի մթերումներից բացի տարածաշրջանում ակտիվացել է տանձի մթերումները, որի արդյունքում տանձի նոր այգիներ են հիմնվում
- Առևտրային կապեր է ստեղծել տարբեր գնորդների հետ՝ մասնակցելով ցուցահանդեսների, որոշակի խմբաքանակ Ռուսաստան է արտահանվել միջնորդի կողմից

Դրամաշնորհային ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 6.505.000 ՀՀ դրամ, որից խմբի ներդրումը կազմել է 55%-ը:

ՄԽ-ի ղեկավար՝ Գառնիկ Ղազարյան, հեռ. 094 92 55 21

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՈՒՄԲ

Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս



Այս խումբը հիմնադրվել է 2018թ, կազմված է երեք ընկերներից, որոնք իրենց կանանց հետ միասին արդեն 6 տարի Վարդենիսում զբաղվում են մրգերի և բանջարեղենի մթերմամբ և վաճառքով:

1 | Լևոն Հովհաննիսյան (խմբի ղեկավար)
2 | Հայկ Վարդանյան
3 | Սասուն Սևոյան

Խմբի անդամները բոլոր աշխատանքները կարողանում են բաշխել հավասարաչափ միմյանց միջև: Խումբը մասնագիտացված է բալի մթերման և վերամշակողներին մատակարարման մեջ: Խումբն աշխատում է չրագործների և այլ վերամշակողների հետ, որոնց համար մթերում է նաև վերամշակման հումք՝ տանձ, սալոր, մոշ և այլն:

Ծրագրի օժանդակությամբ խումբը գրանցել է հետևյալ արդյունքները՝

- Ստեղծվել է մոտ 8 տ տարողությամբ սառնարան
- Խումբը 1248 ֆերմերային տնտեսություններից մթերել է մոտ 406 տ միրգ և բանջարեղեն
- Վերամշակման համար խոշոր գործարաններին վաճառվել է 93 տ բալ

Դրամաշնորհային ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 8.705.000 ՀՀ դրամ, որից խմբի ներդրումը կազմել է 71%-ը:

ՄԽ-ի ղեկավար՝ Լևոն Հովհաննիսյան, հեռ. 098 33 32 01

ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՈՒՄԲ ԾՈՎԱԿ ՀԱՍԱՅՆՔՈՒՄ



Գեղարքունիքի մարզ, գյուղ Ծովակ

1 | Էդուարդ Սարգսյան (խմբի ղեկավար)
2 | Լարիսա Եղիազարյան
3 | Աղասի Ղազարյան
4 | Էդիտա Սարգսյան
5 | Վրույր Սարգսյան

Ծովակ համայնքում գործող 2018 թ. հիմնադրված խումը զբաղվում է մրգի արտադրությամբ: Խմբի ղեկավար Էդուարդ Սարգսյանն ունի լայն կապեր և առևտրի փորձառություն, որը թույլ է տալիս մթերված միրգը վաճառել ՀՀ-ն և ՌԴ-ն մեծածախ շուկաներում:

Բոլոր անդամներն ունեն գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ Ծովակում և արտադրում են տարբեր տեսակի մրգեր՝ հիմնականում տանձ (Անտառային գեղեցկուհի): Բացի սեփական արտադրության պտղից, նրանք մթերում են նաև այլ ֆերմերներից: Ծրագրի համաֆինանսավորմամբ այս խումբն ընդլայնեց մթերման ծավալները և կառուցեց սառնարանային տնտեսություն, որն այժմ կազմում է 10 տ տարողությամբ սառնարանային պահեստ: Պահված մրգերը վաճառվում են Երևանի սուպերմարկետներում:

Արդյունքում

- 4 տարիների ընթացքում խումբը 95 ֆերմերային տնտեսություններից մթերել է 41տ միրգ

Դրամաշնորհային ծրագրի ընդհանուր արժեքը 4.000.000 ՀՀ դրամ է, որից խմբի ներդրումը կազմել է 80%-ը:

ՄԽ-ի ղեկավար՝ Էդուարդ Սարգսյան, հեռ. 093 38 09 34

ԼՃԱՎԱՆԻ՝ ՄՐԳԻ ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՍԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԽՈՒՄԲ



Գեղարքունիքի մարզ, գյուղ Լճավան

Այս խումբը հիմնվել է 2019 թ. Լճավան համայնքում և կազմված է 4 անդամներից

1 | Ռոլանդ Խաչատրյան (խմբի ղեկավար)
2 | Իրինա Խաչատրյան
3 | Լիլիթ Ղազարյան
4 | Դավիթ Մանուկյան

Լճավանը հիմնական ճանապարհներից դուրս և վատ ենթառուցվածքներ ունեցող գյուղ է: Նախկինում տանձ աճեցնող ֆերմերները գրեթե չեն կարողացել իրացնել պտուղը, կամ միջնորդներին են վաճառել շատ ցածր գներով: Խումբը մթերում է կատարում նաև այլ 7 գյուղերից, պահպանում և մեծաքանակ վաճառք իրականացնում:

- Խումբը երեք տարիների ընթացքում 76 ֆերմերային տնտեսություններից մթերել և սառնարանում պահպանել է 20,7 տ պտուղ
- Պտուղը հիմնականում վաճառում են Երևանի մեծածախ և մանրածախ շուկաներում, ինչպես նաև Վանաձոր-Գյումրի քաղաքների շուկաներում
- Խումբը տարեցտարի ավելացնելում է տնկարկների քանակը

Դրամաշնորհային ծրագրի ընդհանուր արժեքը 5.516.000 ՀՀ դրամ է, որից խմբի ներդրումը կազմել է 76%:

ՄԽ-ի ղեկավար՝ Ռոլանդ Խաչատրյան, հեռ. 077 00 80 90

ՎԱՐԴԵՆԻՍԻ՝ ՄՐԳԻ ԵՐԿԽՑԻԿ ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՍԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԽՈՒՄԲ



Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս

Այս խումբը հիմնվել է Վարդենիս համայնքում և կազմված է 3 անդամներից

1 | Գարսևան Բոյախչյան (խմբի ղեկավար)
2 | Արսեն Գրիգորյան
3 | Արսեն Ալեյան

Խումբը հիմնվել է 2019 թվականին մրգի վաճառքի մեջ հմտացած ընկերների կողմից, ովքեր մեծածախ վաճառքով են զբաղվում:

- Ծրագրի օժանդակությամբ կառուցվել է երկխցիկ սառնարան,
- Ապրանքը իրացվում է Վարդենիսի մրգի խանութներում, Երևանի սուպերմարկետներում, ինչպես նաև հանրապետության մեծածախ շուկաներում
- Ընդհանուր առմամբ խումբը 45 ֆերմերային տնտեսություններից մթերել է 27,9 տ պտուղ
- Պտղի պահպանումից բացի սառնարանը նաև տրամադրվել է վարձով՝ տանձի տնկիների համար

Դրամաշնորհային ծրագրի ընդհանուր արժեքը 9.225.000 ՀՀ դրամ է, որից խմբի ներդրումը կազմել է 76%:

ՄԽ-ի ղեկավար՝ Գարսևան Բոյախչյան, հեռ. 098 70 59 00

ՎԱՐԴԵՆԻՍԻ՝ ՄՐԳԻ ԵՐԿԽՑԻԿ ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԽՈՒՄԲ

Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս

Այս խումբը հիմնվել է Վարդենիս համայնքում և կազմված է 3 անդամներից

1 | Խաչատուր Խաչատրյան (խմբի ղեկավար)
2 | Ռուբեն Սիմոնյան
3 | Լևոն Մկրտչյան

2019 թվականին երկխցիկ սառնարան հիմնելու համար խմբի անդամները միավորել են ռեսուրսները:

Ծրագիրը նպաստել է

- Սառնարանային տնտեսության հիմնմանը
- Պտղի իրացման հարցերում օժանդակությանը և այլ մարքեթինգային խմբերի միջև համագործակցության հասատմանը
- Ցուցահանդես վաճառքներին մասնակցությանը և կապերի ստեղծմանը
- Խմբի անդամները մասնակցել են նաև պետության կողմից գյուղատնտեսության համար նախատեսվող վարկերի տոկոսների սուբսիդավորման ծրագրին և գումարն օգտագործվել է պտղի գնման համար:
- Խումբը 70 ֆերմերային տնտեսություններից երեք տարիների ընթացքում մթերել է 44 տ պտուղ

Դրամաշնորհային ծրագրի ընդհանուր արժեքը 10.820.000 ՀՀ դրամ է, որից խմբի ներդրումը կազմել է 79%:

ՄԽ-ի ղեկավար՝ Խաչիկ Խաչատրյան, հեռ. 098 96 30 30



ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ՝ ՄՐԳԻ ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԽՈՒՄԲ



Գեղարքունիքի մարզ, գյուղ Խաչաղբյուր

Այս խումբը հիմնվել է Խաչաղբյուր համայնքում և կազմված է 5 անդամներից

1 | Լիլիթ Մուրադյան (խմբի ղեկավար)
2 | Լևոն Մուրադյան
3 | Սերոբ Մխիթարյան
4 | Մեսրոպ Մխիթարյան
5 | Ռիտա Մխիթարյան

2019 թվականին խումբը կառուցել է նոր սառնարանային տնտեսություն

| ՄԽ-ը 54 ֆերմերային տնտեսություններից մթերել է 27,3 տ պտուղ

Ծրագրի շնորհիվ

| Կառուցվել է ժամանակակից սառնարան

| Խումբը նվազեցրել է պահպանման ընթացքում գոյացող ռիսկերը

| Գերմանիայի դեսպանատան դրամաշնորհի միջոցով ծրագիրը համաֆինանսավորվել է:

Դրամաշնորհային ծրագրի ընդհանուր արժեքը 6.140.000 ՀՀ դրամ է, որից խմբի ներդրումը կազմել է 88%:

ՄԽ-ի ղեկավար՝ Լիլիթ Մուրադյան, հեռ. 093 90 40 95

ՎԱՐԴԵՆԻՍԻ՝ ՄՐԳԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՍԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԽՈՒՄԲ



Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս

Խումբը գործում է Վարդենիս համայնքում 2019 թվականից և կազմված է 4 անդամներից

1 | Հենրիկ Կարապետյան (խմբի ղեկավար)
2 | Արմեն Կարապետյան
3 | Արթուր Ղազարյան
4 | Հայկազ Գրիգորյան

Ծրագրի գաղափարը պատկանում է Արմեն Կարապետյանին: Նա ծնվել և մեծացել է Վարդենիսում, 1997-2019 թթ. բնակվել է Ֆրանսիայի՝ Նորմանդիայի տարածաշրջանում, որը շատ հայտնի է Կալվադոս խմիչքով: 2019 թ. վերադառնալով հայրենիք ընկերների ու եղբոր հետ միասին որոշել են հիմնել ալկոհոլային խմիչքի արտադրամաս՝ Վարդենիս քաղաքում, որի նպատակը յուրահատուկ համի և որակի խնձորի ոգելից ըմպելիքի ներկայացումն էր շուկային:

ՄԽ-ը իրականացրել է տարածքի շինարարություն, ձեռք է բերել մթերման և վերամշակման համար անհրաժեշտ տեխնիկան և գույքը՝ ճզմիչ հյութաքամիչ սարք, արտադրական հոսքագիծ, անհրաժեշտ քանակի 3 և 1 տ տարողությամբ տարաներ, թորման սարք և այլն:

- Երկու տարիների ընթացքում Գեղարքունիքի մարզի գրեթե բոլոր համայնքների ավելի քան 180 ֆերմերներից մթերվել է 100 տ խնձոր,
- Ծրագրի օժանդակությամբ ձեռք են բերվել շշալցման, երկրորդ թորման, պիտակավորման և ֆիլտրացման սարքեր:
- Ծուկայահանվել է նոր ապրանքատեսակ՝ ՏԱՏԵՈՆ անվամբ մրգային ոգելից խմիչք:
- Ծշալցվել 1900-ից ավելի քանակ

Սուպերմարկետների վաճառքում գտնվող հայտնի բրենդների կողքին խմիչքն արդեն գրավում է իր ուրույն տեղը: Այն կարելի է գտնել Երևան Սիթի և SAS սուպերմարկետների ցանցում, Նոյան Տապան ոգելից խմիչքների մասնագիտացված խանութներում, Andaco Spirits ոգելից խմիչքների մասնագիտացված խանութներում, Oasis սուպերմարկետում, Տիտան սուպերմարկետների ցանցում, Երևան-Թբիլիսի սուպերմարկետում, «ՄՄ» և «ՎԱՆ» մարկետներում:

Դրամաշնորհային Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 24.380.000 դրամ, որից խմբի ներդրումը կազմել է 86%:

ՄԽ-ի ղեկավար՝ Հենրիկ Կարապետյան, հեռ. 077 14 35 35

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ՝ ՄՐԳԵՐԻ 4 ԽՑԻԿՈՎ ՄԵԾԱԾԱՎԱԼ ՄԹԵՐՄԱՍԲ, ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՍԲ ԵՎ ՎԱՃԱՌՔՈՎ ՁԲԱՂՎՈՂ ՍԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԽՈՒՄԲ



Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս

Այս խումբը հիմնվել է Վարդենիս համայնքում 2020 թվականին և կազմված է 3 անդամներից

1 | Կարեն Խաչատրյան (խմբի ղեկավար)
2 | Լիլիթ Մինասյան
3 | Մեսրոպ Աղաջանյան

Այս սառնարանը եզակիներից մեկն է ամբողջ տարածաշրջանում, որն ունի 4 խցիկ՝ յուրաքանչյուրը 10 տ տարողությամբ: Ծրագիրն օժանդակել է ՄԽ-ին՝ սառնարանային սարքավորումների ձեռքբերման հարցերում:

Ապրանքն իրացվում է MG սուպերմարկետների ցանցի միջոցով, որի հետ ունեն պայմանագիր ամբողջ տարվա մատակարարման համար:

| Երկու տարիների ընթացքում Գեղարքունիքի մարզի 42 ֆերմերային տնտեսություններից խումբը մթերել է 34 տ միրգ:

Դրամաշնորհային ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 19.819.400 դրամ, որից խմբի ներդրումը կազմել է 87%:

ՄԽ-ի ղեկավար՝ Կարեն Խաչատրյան, հեռ. 094 54 88 88

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ՝ ԵՐԿԽՑԻԿ ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԽՈՒՄԲ



Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի

Այս խումբը հիմնվել է Մարտունի համայնքում 2020 թվականին և կազմված է 3 անդամներից

1 | Նորիկ Ավետիսյան (Խմբի ղեկավար)
2| Արծրուն Դավթյան
3 | Անի Ավետիսյան

Խմբի անդամները մեծ փորձ ունեն մրգերի և այլ գյուղատնտեսական բարիքների առքուվաճառքի ոլորտում: Մթերված մրգերը հիմնականում իրացնում են համայնքում գործող «Արամ» ՍՊԸ տոնավաճառ շուկայում մեծածախ վաճառքների միջոցով, ինչպես նաև մարզում գործող բազմաթիվ փոքր և միջին խանութներում: Խումբն ունի նաև սառնարան-բեռնատար, որը հնարավորություն է տալիս, անհրաժեշտության դեպքում, առանց որակական կորուստների մրգերը տեղափոխել ինչպես մարզի տարածքում, այնպես էլ այլ մարզեր և Երևան:

| Խումբը երկու տարիների ընթացքում 73 ֆերմերային տնտեսություններից մթերել, պահպանել և վաճառել է 56,3 տ պտուղ

Դրամաշնորհային ծրագրի ընդհանուր արժեքը 14.594.600 ՀՀ դրամ է, որից խմբի ներդրումը կազմել է 91%:

ՄԽ-ի ղեկավար՝ Նորիկ Ավետիսյան, հեռ. 093 96 78 68

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ՝ ԵՐԿԽՑԻԿ ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՍԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԽՈՒՄԲ



Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի

Այս խումբը հիմնվել է 2020 թ. Մարտունի համայնքում և կազմված է 3 անդամներից

1 | Ռուբեն Դավթյան (Խմբի ղեկավար)
2 | Ասքանազ Մանուկյան
3 | Արթուր Բաղդասարյան

Խումբն ունի բավականին մեծ փորձ վաճառքի ոլորտում և լավ կապեր՝ Վայոց Ձորի մարզի գյուղացիական միրգ արտադրող տնտեսությունների և Մարտունու տարածքի մրգի վաճառքով զբաղվող կազմակերպությունների հետ: Մթերված տանձը, խնձորը և ծիրանը հիմնականում իրացնում են Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի շուկայում, ինչպես նաև Երևան քաղաքի մանրամեծածախ շուկաներում և մրգի վաճառքով զբաղվող խանութներում:

Ծրագրի միջնորդությամբ ստեղծված երկու խցիկով սառնարանային տնտեսությունը հնարավորություն է տալիս մթերել, պահեստավորել և պահպանել որակյալ պտուղ և բարձր գներով վաճառել այն:

| Խումբը երկու տարիների ընթացքում 95 ֆերմերային տնտեսություններից մթերել և վաճառել է 24,3 տ պտուղ

Դրամաշնորհային ծրագրի ընդհանուր արժեքը 15.156.900 դրամ, որից խմբի ներդրումը կազմել է 85%:

ՄԽ-ի ղեկավար՝ Ռուբեն Դավթյան, հեռ. 094 04 00 87

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ՝ ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԽՈՒՄԲ



Գեղարքունիքի մարզ, գյուղ Ակունք

1 | Արտյոմ Աղոյան (Խմբի ղեկավար)

2 | Գևորգ Խաչատրյան

3 | Տարոն Հարությունյան

Բազմիցս մասնակցելով ՇԵՆ ԲՀԿ-ի կազմակերպած դասընթացներին՝ խումբը 2018-ից սկսված իր ուժերով կառուցել է սառնարանային տնտեսություն՝ 65 մ^3 ծավալով: 2021թ-ին ծրագրի դրամաշնորհի սատարմամբ, խումբը վերազինեց գործող սառնարանը ժամանակակից սարքավորումներով՝ հին սարքավորումները փոխարինելով ավելի ժամանակակիցներով: Ստանալով մասնագիտական խորհրդատվություն՝ խումբն իրականացնում է մրգերի առավել երկարատև, անվնաս և որակյալ պահպանություն:

| Մեկ տարվա ընթացքում 22 ֆերմերային տնտեսություններից մթերել և պահպանել է 9.5 տ միրգ:

Դրամաշնորհային ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 5.650.000 դրամ, որից խմբի ներդրումը կազմել է 82%

ՄԽ-ի ղեկավար՝ Արտյոմ Աղոյան, հեռ. 077 57 95 99

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ՝ ՁՈՐԱՑՎԱԾ ՄՐԳԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԽՈՒՄԲ



Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս

Այս խումբը հիմնվել է Վարդենիս համայնքում 2021 թվականին և կազմված է 3 անդամներից

1 | Արմինե Զիրոյան (խմբի ղեկավար)
2 | Արթուր Հարությունյան
3 | Մարինե Հարությունյան

Անդամները Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի տարածքում ունեցած իրենց սեփական հողակտորների վրա երկար տարիներ զբաղվում են այգեգործությամբ: Խումբը 2021 թ.-ից չորացված միրգ է վաճառում ՌԴ-ում, մասնավորապես Մոսկվայում: Ծրագրով տրամադրված սարքավորումները թույլ են տալիս վերամշակել բարձրորակ մրգեր՝ ստանալով առաջին որակի բարձրարժեք չիր: Ստացված ապրանքատեսականին վաճառվում է տարբեր կշռաչափերով, գեղեցիկ տուփերով ու փաթեթներով: Չրերի հետ տրամադրվում է տեղեկատվություն ապրանքի օգտակարության, պատրաստման եղանակի և պահպանման մասին:

| Մեկ տարվա ընթացքում 14 ֆերմերային տնտեսություններից մթերել է 5 տ միրգ,
| Արտադրել է 950 կգ չիր (ծիրանի, սև սալորի, տանձի)

Դրամաշնորհային ծրագրի ընդհանուր արժեքը 4.370.000 ՀՀ դրամ, որից խմբի ներդրումը կազմել է 66%:

ՄԽ-ի ղեկավար՝ Արմինե Զիրոյան, հեռ. 091 90 28 88



ՄԱՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԿԽՑԻԿ ՄԱՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ՝ ԵՐԿԽՑԻԿ ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԽՈՒՄԲ



Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի

1 | Խանում Ղազարյան (խմբի ղեկավար)
2 | Կարեն Ղազարյան
3 | Հասմիկ Մոսոյան

Այս խումբը հիմնվել է Մարտունի համայնքում 2021 թվականին, կազմված է 3 անդամներից, որոնք լրիվ նոր սառնարանային պահեստ են կառուցել՝ կիրառելով նոր տեխնոլոգիաներ: Ծրագիրը աջակցել է սարքավորումների ձեռքբերման և տեխնիկական գիտելիքների տրամադրման առումով:

| Խումբը այս տարի 10 ֆերմերային տնտեսություններից մթերել է 13 տ միրգ,

Դրամաշնորհային ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 12.040.110 դրամ, որից խմբի ներդրումը կազմել է 79%:

ՄԽ-ի ղեկավար՝ Խանում Ղազարյան, հեռ. 094 60 50 04

ԾՈՎԻՆԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ՝ ԵՐԿԽՑԻԿԱՆԻ ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՄԲ ՁԲԱՂՎՈՂ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԽՈՒՄԲ

Գեղարքունիքի մարզ, գյուղ. Ծովինար

Այս խումբը հիմնվել է Ծովինար համայնքում 2021 թվականին և կազմված է 3 անդամներից՝

1 | Միհրանուշ Սահակյան (Խմբի ղեկավար)
2 | Արթուր Մանուկյան
3 | Գայանե Խաչատրյան

ՄԽ-ն ծրագրի օժանդակությամբ կառուցել է երկխցիկ սառնարան:

| Խումբը մեկ տարվա ընթացքում 12 ֆերմերային տնտեսություններից մթերել է 17.2 տ միրգ

Դրամաշնորհային ծրագրի ընդհանուր արժեքը 8.065.000 դրամ է, որից խմբի ներդրումը կազմել է 83%:

ՄԽ-ի ղեկավար՝ Միհրանուշ Սահակյան, հեռ. 093 20 89 90

Երևան 2021